ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2012-2014 ԹԹ.

ԸՍՏ ԲԱՆԿԵՐԻ 2012-2014 ԹԹ. ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Ի կատարումն ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 11.11.2003թ. թիվ 385 որոշման՝ ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը ՀՀ կենտրոնական բանկ են ներկայացրել 2012-2014թթ. հեռանկարային զարգացման ծրագրերը, որտեղ ներկայացված են իրենց կողմից մշակված ռազմավարություններն առաջիկա երեք տարիների համար, ինչպես նաև կատարված են հիմնական ֆինանսական ցուցանիշների կանխատեսումները:

Երևան - 2012

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I 2011թ. ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 3

- ✓ 2011թ. խնդիրների կատարողականը 6

II ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 2012-2014 ԹԹ. ՀԱՄԱՐ 10

- ✓ 2012-2014թթ. հիմնական ազդող գործոնները 10
- ✓ Առևտրային բանկերի 2012-2014թթ. հիմնական նպատակները 14
- ✓ Առևտրային բանկերի հիմնական ֆինանսական ցուցանիշների 2012-2014թթ. կանխատեսումները 16
  - Կապիտալ 16
  - Պարտավորություններ 16
  - Ակտիվներ 18
  - Ֆինանսական արդյունքներ 21
  - Վճարահաշվարկային գործունեություն 23

III ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 25

IV ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 30

V ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 33

VI ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 35

VII ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ "ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ" 37

VIII ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ 37

IX ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ 39

X ԱՄՓՈՓՈՒՄ 40

Հավելված 1. *Հայաստանի Հանրապետության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների սպասումները*

Հավելված 2. *ՀՀ բանկային համակարգի կանխատեսվող հաշվեկշիռը*

Հավելված 3. *ՀՀ բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կանխատեսումները*

Հավելված 4. *ՀՀ բանկային համակարգի վարկային ներդրումների կանխատեսվող ժամկետային և ճյուղային կառուցվածքը*

Հավելված 5. *ՀՀ բանկային համակարգի կառավարման արդյունավետության ցուցանիշներ*

Հավելված 6. *ՀՀ բանկային համակարգի ծառայություններից օգտվող հաճախորդների, շահագործվող նոր վճարային տեխնոլոգիաներով պայմանավորված կանխատեսվող ցուցանիշներ*

Հավելված 7. *ՀՀ բանկային համակարգում կոնցենտրացման չափերը*

I 2011թ. ՀԻՄՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

2012-2014թթ. ՀԶԾ-ներում ՀՀ առևտրային բանկերը առանձնացրել են 2011թ. իրենց գործունեության վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցած միջազգային, ՀՀ ներքին տնտեսական և ֆինանսաբանկային հատվածի հետևյալ զարգացումները[1].

✓ *Միջազգային զարգացումներ*

- ***Համաշխարհային տնտեսության զարգացման անորոշություններ և սպասվածից դանդաղ վերականգնում:*** 2011թ-ին համաշխարհային տնտեսության մի շարք ոլորտների դանդաղ տեմպերով վերականգնմանը զուգահեռ առաջացան նոր ռիսկեր և անորոշություններ՝ որոշ երկրների պարտքային հիմնախնդիրների և համաշխարհային ճգնաժամի երկրորդ ալիքի հետ կապված: Ֆինանսական շուկաները տարվա ընթացքում գործել են մեծ անորոշությունների պայմաններում՝ կապված Եվրոգոտու ֆինանսական հիմնախնդիրների հնարավոր սրման և համաշխարհային տնտեսական աճի դանդաղման սպասումների հետ:
- ***Միջազգային շուկաներում տոկոսադրույքների ցածր մակարդակ.*** ինչը ենթադրում է ցածր ծախսատարություն բանկերի համար ինչպես առկա պարտավորությունների, այնպես էլ նոր ներգրավելիք ռեսուրսների մասով, քանի որ բանկերի ներգրաված միջազգային միջոցների տոկոսադրույքների հիմքում սովորաբար ընկած է Լիբորը:

  Միաժամանակ պետք է փաստել, որ միջազգային շուկաներում ճգնաժամի հետևանքով կենտրոնական բանկերի կողմից սահմանված ցածր տոկոսադրույքների պայմաններում հայաստանյան բանկերի ոչ ռեզիդենտ բանկերում թղթակցային հաշիվների եկամտաբերության մակարդակը որոշակիորեն կրճատվել է:

✓ *Ներքին տնտեսական զարգացումներ*

- ***ՀՀ տնտեսության վերականգնում և բնակչության եկամուտների աճ.*** Տնտեսության իրական հատվածում որոշ ոլորտների ակտիվությունը հանգեցրել է կորպորատիվ հաճախորդների կողմից վարկերի նկատմամբ պահանջարկի աճի, հետևաբար բանկերի կողմից վարկավորման ծավալների աճի, ինչպես նաև վարկային պորտֆելի որակի և բանկային համակարգի շահութաբերության բարձրացման: Իսկ բնակչության եկամուտների աճը մեծապես նպաստել է բանկերի հաճախորդներից ներգրավված միջոցների աճի:
- ***Շինարարության ոլորտի անկում.*** ինչի արդյունքում վարկային ռիսկի առաջացման հավանականությամբ պայմանավորված բանկերը սկսել են ավելի զգուշավոր քաղաքականություն վարել և այդ ոլորտի վարկավորումն իրականացվել է ավելի զուսպ տեմպերով:

[1] Հատկանշական է, որ ՀՀ առևտրային բանկերը, առանձնացնելով իրենց գործունեության վրա առավել նշանակալի ազդեցություն ունեցած գործոնները, հաճախ չեն նշում, թե կոնկրետ իրենց վրա այդ գործոնները ինչպես են ազդել, ինչը դժվարացնում է առանձին բանկերի վրա ազդող գործոնների առանձնացումը:

- ***Տրանսֆերտների ծավալների աճ.*** Ճգնաժամային երևույթների նվազումը ՌԴ-ում և տնտեսության համեմատական ակտիվացումը, կապված նաև նավթի գների աճի և շինարարության տեմպերի վերականգնման հետ, իր դրական ազդեցությունն է ունենում ՌԴ-ի աշխատաշուկայի վրա, որն իր հերթին ավելացնում է ՌԴ-ից ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների ծավալը:

✓ ***Ֆինանսաբանկային հատվածի զարգացումներ***

- ***ՀՀ ֆինանսական համակարգում աշխուժություն.*** ներքին տնտեսության ակտիվացումը հանգեցրել է վարկերի նկատմամբ պահանջարկի աճի, որի արդյունքում նախորդ տարվա համեմատ բանկերի վարկային պորտֆելն էապես աճել է: Նշվածին նպաստել է նաև հաճախորդներից ներգրավված միջոցների աճը, ինչը ևս վկայում է տնտեսության վերականգնման և բնակչության եկամուտների աճի մասին:
- ***Բանկային համակարգում մրցակցության խորացում.*** մրցակցության խորացումը բանկային համակարգում հիմնականում գնային պատերազմի տեսքով է ի հայտ եկել, ինչն էլ հանգեցրել է առաջին հերթին կորպորատիվ բանկային ծառայությունների մարժաների կրճատման: Ընդ որում նախորդ տարիներին արձանագրված մրցակցության սրացումը խոշոր կորպորոտիվ հաճախորդների ոլորտից այս տարի տեղափոխվել է ՓՄՁ և մանրածախ հատված:
- ***Շուկայում վարկավորման տոկոսադրույքների նվազման միտում.*** բանկային համակագում հետզհետե սրվող մրցակցությունն և կառավարության կողմից էժան փողերի ներարկման շարունակական քայլերը հանգեցրել են վարկերի տոկոսադրույքների իջեցման, ինչն էլ իր հերթին բերել է վերջիններիս նկատմամբ պահանջարկի աճի:
- ***Տոկոսային մարժայի կրճատում.*** Դրամային միջոցների սղությունը ստիպել է հայաստանյան բանկերին բարձրացնել ավանդների տոկոսադրույքները՝ դրանք ավանդատուների համար գրավիչ դարձնելու համար: Միաժամանակ միջբանկային մրցակցության և տնտեսության իրական հատվածում աճի դանդաղ տեմպերի պայմաններում բանկերը չեն կարողանում բարձրացնել վարկավորման տոկոսադրույքները, որը հանգեցնում է տեղաբաշխված և ներգրավված միջոցների տոկոսադրույքների սպրեդի և տոկոսային մարժայի կրճատման:

  Տոկոսային մարժայի կրճատմանն է նպաստել նաև այն հանգամանքը, որ որոշ բանկեր օգտվել են օտարերկրյա էժան ռեսուրսների ներգրավման հնարավորությունից, ինչը լուրջ մրցակցային պայքար է ստեղծել և ստիպել բանկերին ավելցուկային իրացվելի միջոցների տեղաբաշխման նպատակով իջեցնել վարկավորման տոկոսադրույքները և կրճատել տոկոսային մարժան:
- ***Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացում:*** Վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճի արդյունքում տարվա ընթացքում աճել են նաև միջբանկային վարկերի և ռեպո գործարքների տոկոսադրույքները, ինչը հանգեցրել է բանկերի կողմից ներգրավվող միջոցների ծախսատարության:

- ✓ ***<u>Կարգավորման դաշտի փոփոխություններ</u>***
  - ***Պարտադիր պահուստավորման նորմատիվի փոփոխությունը.*** Բանկերից շատերի հավաստմամբ զգալի ազդեցություն է ունեցել արտարժութային ներգրավված միջոցների պահուստավորման փոփոխության վերջին փուլը, ինչի արդյունքում բանկերի դրամային միջոցների սղության խնդիրն էլ ավելի է խորացել՝ որոշակիորեն նվազեցնելով համակարգում վարկավորման համար մատչելի դրամային ռեսուրսների ծավալը և միևնույն ժամանակ փոքր-ինչ բարձրացնելով արտարժույթով վարկավորման ինքնարժեքը:

2011թ. խնդիրների կատարողականը

2011թ. ՀՀ առևտրային բանկերը հիմնականում կատարել են 2011-2013թթ. ՀԶԾ-ներով նախատեսված խնդիրները: Հարկ է նշել, սակայն, որ հաճախ բանկերի նպատակների և խնդիրների կատարողականի գնահատումն դժվարանում է՝ վերջիններիս ոչ չափելի լինելու պատճառով:

Ստորև ներկայացված է 2011թ. փաստացի ցուցանիշների շեղումները 2011-2013թթ. ՀԶԾ-ներով ծրագրված ցուցանիշներից.

	31.12.2011թ. համար - կանխատեսված (հազ. դրամ)	31.12.2011թ. դրությամբ փաստացի (հազ. դրամ)	Շեղում կանխատեսվածից (հազ. դրամ)	Շեղում կանխատեսվածից (%)
ԱԿՏԻՎՆԵՐ				
Կանխիկ դրամական միջոցներ	*77,871,337*	*90,955,144*	*13,083,807*	*17%*
Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում	*155,010,141*	*263,662,269*	*108,652,128*	*70%*
Թղթակցային հաշիվներ բանկերում	*75,504,737*	*69,318,287*	*(6,186,450)*	*-8%*
Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված դեպոզիտներ և վարկեր	*22,802,967*	*69,470,176*	*46,667,209*	*205%*
Վարկեր տնտեսությանը	*1,159,197,082*	*1,217,380,625*	*58,183,543*	*5%*
Պետական արժեթղթեր	*130,850,747*	*113,509,342*	*(17,341,405)*	*-13%*
Այլ արժեթղթեր	*3,432,025*	*6,317,870*	*2,885,845*	*84%*
Լիզինգ և ֆակտորինգ	*45,266,313*	*24,238,523*	*(21,027,789)*	*-46%*
Հիմնական միջոցներ	*91,366,517*	*82,365,780*	*(9,000,738)*	*-10%*
Այլ ակտիվներ	*111,622,523*	*161,587,910*	*49,965,387*	*45%*
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ	***1,872,924,388***	***2,098,805,926***	***225,881,537***	***12%***
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Թղթակցային հաշիվներ	*16,794,536*	*15,688,723*	*(1,105,813)*	*-7%*
Բանկերից և ՀՀ ԿԲ-ից ներգրավված ավանդներ և վարկեր	*280,974,230*	*314,104,751*	*33,130,521*	*12%*
Այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված ավանդներ և վարկեր	*215,761,022*	*215,386,097*	*(374,925)*	*0%*
Պարտավորություններ գանձապետարանի նկատմամբ	*48,534,206*	*66,301,902*	*17,767,696*	*37%*
Ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցներ և հաշիվներ	*120,713,310*	*128,801,058*	*8,087,748*	*7%*
Իրավաբանական անձանց և հիմնարկների ցպահանջ միջոցներ և հաշիվներ	*209,834,299*	*254,391,382*	*44,557,083*	*21%*
Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ	*348,557,253*	*430,105,403*	*81,548,150*	*23%*
Իրավաբանական անձանց և հիմնարկների ժամկետային ավանդներ	*130,001,841*	*133,598,015*	*3,596,174*	*3%*
Այլ պարտավորություններ	*129,206,370*	*184,775,463*	*55,569,093*	*43%*
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	***1,500,377,067***	***1,743,152,794***	***242,775,727***	***16%***

ԿԱՊԻՏԱԼ				
Փաստացի համալրած կանոնադրական կապիտալ	*222,294,790*	*233,945,229*	*11,650,440*	*5%*
Ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթ (վնաս)	*40,943,076*	*31,707,336*	*(9,235,740)*	*-23%*
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ	***372,547,321***	***355,653,132***	***(16,894,189)***	***-5%***

Այսպիսով, ՀՀ բանկային համակարգի ակտիվների 2011թ. փաստացի ցուցանիշները կանխատեսվածի համեմատ գերակատարվել են 12%-ով կամ 226 մլրդ դրամով, պարտավորությունները գերակատարվել են 16%-ով կամ 243 մլրդ դրամով, իսկ կապիտալը թերակատարվել է 5%-ով կամ 17 մլրդ դրամով:

Ակտիվների մեծության 226 մլրդ դրամով գերակատարմանը բացարձակ մեծությամբ ամենաշատը նպաստել են "Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում" և "Վարկեր տնտեսությանը" հոդվածների գերակատարումները՝ համապատասխանաբար 109 մլրդ դրամով և 58 մլրդ դրամով:

Պարտավորությունների գերակատարմանը մեծապես նպաստել են ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 81 մլրդ դրամի գերակատարումը, ինչպես նաև իրավաբանական անձանցից ներգրաված ցպահանջ ավանդների 45 մլրդ դրամի գերակատարումը:

ՀՀ առևտրային բանկերի եկամուտների և ծախսերի կատարողականն ունի հետևյալ տեսքը.

	31.12.2011թ. համար կանխատեսված (հազ. դրամ)	**31.12.2011թ. փաստացի (հազ. դրամ)**	**Շեղում ծրագրվածից (հազ. դրամ)**	**Շեղում ծրագրվածից (%)**
Տոկոսային եկամուտներ	168 390 083	176 062 945	7 672 863	5%
Տոկոսային ծախսեր	73 016 330	80 977 318	7 960 987	11%
Զուտ տոկոսային եկամուտներ	95 373 752	95 085 627	(288 125)	-0.3%
Ոչ տոկոսային եկամուտներ	50 833 895	49 379 872	(1 454 022)	-3%
Ոչ տոկոսային ծախսեր	87 899 400	83 715 071	(4 184 329)	-5%
Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	(37 065 505)	(34 335 198)	2 730 307	-7%
Զուտ մասհանումներ	5 934 413	19 391 563	13 457 150	227%
Զուտ շահույթ	**41 360 557**	**32 098 367**	**(9 262 190)**	**-22%**
ROA	2.4%	1.7%	**-0.7 տ.կ.**	
ROE	11.9%	9.5%	**-2.4 տ.կ.**	

ՀՀ բանկային համակարգի 2011թ. զուտ շահույթը ծրագրված ցուցանիշից փոքր է եղել 22%-ով կամ մոտ 9 մլրդ դրամով: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ակտիվներն ու կապիտալը շահույթի հետ համեմատած ավելի շատ են գերակատարվել, բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները թերակատարվել են, այսպես՝ ըստ կապիտալի շահութաբերությունը ծրագրվածից փոքր է եղել 2.4 տոկոսային կետով, իսկ ըստ ակտիվների շահութաբերության ցուցանիշը՝ կանխատեսվածից շեղվել է 0.7 տոկոսային կետով:

Վճարահաշվարկային համակարգը բնութագրող ցուցանիշների մի մասով ՀՀ բանկային համակարգը գերակատարել է կանխատեսած մեծությունները, իսկ մյուս մասով՝ թերակատարել: Սակայն հարկ է նշել որ, ի տարբերություն ֆինանսական վիճակը նկարագրող ցուցանիշների, ցուցանիշների այս համախումբը ավելի դժվար է կանխատեսել, քանի որ վերջինս շատ ավելի քիչ է կախված բանկի ռազմավարական որոշումներից (ինչպես օրինակ վարկային ռազմավարությունը), որի հետևանքով էլ դառնում է շատ անկանխատեսելի:

	31.12.2011թ. համար կանխատեսված	31.12.2011թ. փաստացի	Շեղում ծրագրվածից	Շեղում ծրագրվածից (%)
Հաճախորդների քանակը,այդ թվում՝	1,415,022	1,449,693	34,671	2%
Իրավաբանական անձ	80,862	68,998	(11,864)	-15%
Ֆիզիկական անձ	1,334,160	1,380,695	46,535	3%
Հաճախորդների հաշիվների քանակը՝ ներառյալ վարկային հաշիվները, այդ թվում՝	*1,895,732*	*2,214,300*	*318,568*	*17%*
Իրավաբանական անձանց հաշիվներ	*151,207*	*144,990*	*(6,217)*	*-4%*
Ֆիզիկական անձանց հաշիվներ	*1,744,526*	*2,069,310*	*324,784*	*19%*
Տրամադրված գործող քարտերի քանակը, այդ թվում՝	**1,026,110**	**974,753**	**(51,357)**	**-5%**
Հաշվարկային (դեբետային քարտեր)	*858,648*	*832,331*	*(26,317)*	*-3%*
Վարկային քարտեր	*136,005*	*141,369*	*5,364*	*4%*
Կանխավճարային քարտեր	*31,457*	*1,053*	*(30,404)*	*-97%*
Քարտերից օգտվող հաճախորդների քանակը, այդ թվում՝	**924,813**	**806,392**	**(118,420)**	**-13%**
Իրավաբանական անձ	*4,331*	*3,298*	*(1,033)*	*-24%*
Ֆիզիկական անձ	*920,482*	*803,094*	*(117,387)*	*-13%*
Քարտերի սպասարկման միջոցներ (բացառվում են համատեղությամբ ընդգրկվածները)	**8,051**	**6,646**	**(1,405)**	**-17%**
Տեղադրված ՊՈՍ-տերմինալներ, այդ թվում՝	*6,979*	*5,633*	*(1,346)*	*-19%*
ՊՈՍ-տերմինալներ ՀՀ մարզերում (բացի ք. Երևանից)	*824*	*805*	*(19)*	*-2%*
Տեղադրված ԱԳՄ-ներ, այդ թվում՝	*1,072*	*1,013*	*(59)*	*-6%*
ԱԳՄ-ներ ՀՀ մարզերում (բացի ք.Երևանից)	*352*	*354*	*2*	*1%*
Բանկի քարտապանների կողմից կատարված գործառնությունների ծավալը ՀՀ տարածքում և արտասահմանում (մլն. ՀՀ դրամ), այդ թվում՝	**687,107**	**650,252**	**(36,856)**	**-5%**
Կանխիկացում, այդ թվում՝	*612,866*	*568,144*	*(44,722)*	*-7%*
Կանխիկացում արտասահմանում	*28,870*	*13,665*	*(15,206)*	*-53%*
Անկանխիկ գործառնություններ տերմինալներով, այդ թվում՝	*63,208*	*69,308*	*6,100*	*10%*

Անկանխիկ գործառնություններ արտասահմանում	*24,185*	*35,692*	*11,506*	*48%*
Վիրտուալ միջավայրում անկանխիկ գործառնություններ	*10,905*	*12,800*	*1,895*	*17%*
Կանխիկի մուտքագրում, այդ թվում՝	*129*	*0*	*(129)*	*-100%*
Կանխիկի մուտքագրում արտասահմանում	*22*	*0*	*(22)*	*-100%*
Բանկ-հաճախորդ և այլ նմանատիպ համակարգերից օգտվող հաճախորդների քանակը, այդ թվում՝	**32,830**	**55,415**	**22,585**	**69%**
Իրավաբանական անձ	*14,611*	*25,791*	*11,180*	*77%*
Ֆիզիկական անձ	*18,218*	*29,624*	*11,405*	*63%*
Ֆիզիկական անձանց միջազգային փոխանցումները (մլն. ՀՀ դրամ), այդ թվում՝	**742,379**	**768,512**	**26,133**	**4%**
Դեպի Հայաստան	*467,955*	*515,802*	*47,847*	*10%*
Դեպի արտասահման	*274,424*	*252,709*	*(21,714)*	*-8%*

Այսպիսով վերոնշյալ աղյուսակից նկատելի են դառնում հետևյալ միտումները.

- հիմնականում թերակատարվել են վճարային քարտերի քանակի, քարտերով գործառնությունների, քարտատերերի քանակի, քարտերի սպասարկման միջոցների կանխատեսումները:
- հիմնականում գերակատարվել են հաճախորդների քանակի, վերջիններիս հաշիվների, բանկ-հաճախորդ և նմանատիպ համակարգերից օգտվողների քանակի, ինչպես նաև դեպի Հայաստան ֆիզիկական անձանց միջազգային փոխանցումների կանխատեսումները:

ՀՀ առևտրային բանկերը որպես 2011թ. փաստացի ցուցանիշների՝ ծրագրված ցուցանիշներից շեղման հիմնական պատճառներ առանձնացնում են հետևյալ գործոնները՝

- շուկայում պահանջարկի/առաջարկի փոփոխություն
- տնտեսական աճի սպասվածից ցածր մակարդակ
- պարտադիր պահուստավորման ՀՀ ԿԲ պահանջների փոփոխություն
- փոխարժեքի տատանումների ազդեցություն
- ֆինանսական շուկայում տոկոսադրույքների փոփոխություն
- հաճախորդների վարքագծի փոփոխություններ
- մրցակցության սրում
- վարկային պորտֆելի որակի վատացում
- գործընկեր ֆինանսական կառույցների հետ համագործակցության չկանխատեսված զարգացումներ

II ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ 2012-2014 ԹԹ. ՀԱՄԱՐ

(կանխատեսված ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են Հավելված 1-ում)

2012-2014թթ. հիմնական ազդող գործոնները

Կանխատեսվող ժամանակաշրջանի համար ՀՀ առևտրային բանկերը՝ որպես արտաքին միջավայրից, ներքին տնտեսությունից և ֆինանսական հատվածից բխող և իրենց գործունեության վրա ազդեցության տեսանկյունից առավել նշանակալի գործոններից առանձնացրել են.

- ***Միջազգային շուկաներում***

  - ***Ճգնաժամի երկրորդ ալիքի հնարավորությունը***. Բանկերից շատերի կանխատեսումներով միջազգային ֆինանսական շուկաներում շարունակվող իրացվելիության ճգնաժամը կարող է բանկերի համար դժվարություններ ստեղծել նոր ֆինանսական ռեսուրսների ներգրավման տեսանկյունից:

    Եվրոպական որոշ երկրներում ցածր տնտեսական աճի, բյուջետային դժվարությունների և ֆինանսական ճնշումների հետ կապված խնդիրների խորացման, եվրոպական շուկաներում ֆինանսական անկայունության վտանգը կարող է տեղիք տալ ճգնաժամի երկրորդ ալիքի առաջացմանը և նորից վարակի էֆեկտով անդրադառնալ այլ տարածաշրջանների շուկաների վրա, որն էլ իր բացասական ազդեցությունը կունենա Հայաստանի արտաքին պահանջարկի և տնտեսական աճի վրա:

  - ***Համաշխարհային տնտեսական աճ.*** Բանկերի կանխատեսումների համաձայն, Հայաստանի Հանրապետության հիմնական առևտրային գործընկեր հանդիսացող երկրների տնտեսություններում կդրսևորվեն կայուն, սակայն դանդաղ աճի միտումներ:

  - ***Գները համաշխարհային շուկաներում.*** Բանկերի կանխատեսումներով ոսկու և պղնձի շուկաներում մոտակա տարիներին գների անկում չի սպասվում: Որոշակի անորոշություններ կան նավթի գների շուրջ՝ կապված շուկայի կառուցվածքային փոփոխություններով:

  - ***Միջազգային շուկաներում տոկոսադրույքների քաղաքականություն.*** Բանկերի մի մասը կանխատեսում է, որ միջազգային շուկաներում մոնետար իշխանությունների կողմից վարվող ցածր տոկոսադրույքների ներկայիս քաղաքականությունը կշարունակվի նաև առաջիկայում: Այս քաղաքականությունը կարող է երկակի ազդեցություն ունենալ. միջազգային շուկաներում ցածր տոկոսադրույքները կարող են նպաստել բանկերի կողմից էժան միջոցների ներգրավմանը, միաժամանակ կարող են բացասական ազդեցություն ունենալ բանկերի տոկոսային եկամտի մակարդակի վրա՝ լողացող տոկասադրույքով միջոցներ տեղաբաշխելիս:

    Իսկ բանկերից որոշներն էլ կանխատեսում են տոկոսադրույքների դանդաղ, սակայն աստիճանական բարձրացում:

  - ***Փոխարժեք.*** Բանկերը կանխատեսում են ԱՄՆ դոլարի աստիճանական արժևորում Եվրոյի նկատմամբ, ինչը բանկերից շատերին ստիպելու է լրջորեն մտածել արտարժութային ռիսկերի հեջավորման մասին:

  - ***Իրանի Իսլամական Հանրապետությունում պատերազմական գործողությունների հնարավորությունը.*** Նման սցենարի ի հայտ գալու պարագայում այն իր անմիջական

բացասական ազդեցությունը կունենա ՀՀ տնտեսության վրա: Այս դեպքում կբարձրանա լարվածությունը ողջ տարածաշրջանում, մասնավորապես, կարող է սրվել Լեռնային Ղարաբաղի դեմ Ադրբեջանի կողմից ռազմական գործողությունների իրականացման վտանգը: Արդյունքում, ՀՀ ապրանքների ներմուծման հիմնական ուղին կմնա Վրաստանի տարածքը, որը կարող է հանգեցնել գնաճի, երկրից կարող է սկսվել դրամական միջոցների արտահոսք, որը կհանգեցնի ՀՀ դրամի արժեզրկման, իսկ ՀՀ բանկերի համար կդժվարանա միջազգային կազմակերպություններից միջոցներ ներգրավելը:

✓ ***<u>ՀՀ տնտեսությունում</u>***

- ***ՀՀ տնտեսական աճ***. Դիտարկվող ժամանակահատվածում կանխատեսվում է մակրոտնտեսական ցուցանիշների ընդհանուր բարելավում, աճ տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում: Միաժամանակ հարկ է նշել, որ բանկերի մեծ մասը կանխատեում են, որ գալիք տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական իրավիճակը կբնութագրվի դանդաղ տնտեսական աճով՝ հաշվի առնելով Եվրոգոտու սպասվող թուլացումը, ինչը կբերի Հայաստանում այդ երկրներից ներդրումների և մասնավոր տրանսֆերտների կրճատման/աճի դանդաղման:

Ընդհանուր առմամբ բանկերը 2012թ. համար կանխատեսել են 4.0-5.5% իրական ՀՆԱ աճ:

- ***Բնակչության եկամուտների/տրանսֆերտների և կապիտալի ներհոսքի աճ***. Սպասվում է, որ տնտեսական աճի վերականգնումը Ռուսաստանում դրական ազդեցություն կունենա դեպի Հայաստան ուղղվող մասնավոր փոխանցումների ծավալի վրա: Սակայն կան բանկեր, որոնց կանխատեսումներով ակնկալվում է մասնավոր տրանսֆերտների աճի տեմպերի նվազում՝ պայմանավորված ընդունող երկրներում (հիմնականում՝ Ռուսաստան) սեզոնային աշխատանքների պայմանների խստացմամբ և զարգացած երկրներում տնտեսական աճի տեմպերի դանդաղման հավանականությամբ (հիմնականում՝ ԱՄՆ):
- ***Գնաճ.*** Բանկերի մեծամասնության կանխատեսումներով գալիք երեք տարիների ընթացքում գնաճի ցուցանիշները կլինեն թիրախի սահմաններում

Բանկերի կանխատեսումների համաձայն 2011թ-ին սպասվում է միջինում 4.4% գնաճ: Բանկերի մեծ մասը կանխատեսել են 4.0-5.5%-ի սահմաններում տատանվող գնաճի ցուցանիշ:

- ***Տնտեսության սփվերային հատվածի աստիճանական նվազում.*** Ինչը ենթադրում է բանկային հատվածով անցնող գործարքների աճ:

✓ ***<u>Ֆինանսաբանկային հատվածում</u>***

- ***Բանկերի հիմնական ցուցանիշների կայուն աճ.*** Բանկերի մեծամասնության սպասումներով կանխատեսվող ժամանակահատվածում ՀՀ բանկային համակարգում կնկատվի վարկերի տրամադրման ծավալներ աճ՝ հիմնականում ՀՀ տնտեսության աշխուժացման արդյունքում:

- ***Ավանդների աճի տեմպ.*** Որոշ բանկերի կանխատեսումներով ապագայի անորոշությունները և բնակչության եկամուտների աճի տեմպի հնարավոր նվազումը կարող է հանգեցնել բանկերի կողմից ներգրավված ավանդների աճի տեմպերի նվազման:
- ***Ակտիվների որակ.*** Միձազգային զարգացումների վատատեսական սցենարի ի հայտ գալու պարագայում որոշ բանկերի կանխատեսմամբ ՀՀ ներքին տնտեսական աշխուժության նվազման հետևանքով հնարավոր է վարկառուների վճարունակության վտանգում և հետևաբար բանկերի վարկային պորտֆելի որակի վատացում:
- ***Դրամավարկային քաղաքականություն***. Բանկերի մեծամասնությունը սպասում են դրամավարկային քաղաքականության խստացում կամ առնվազն վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձր մակարդակի պահպանում: Գնաճի նպատակային թիրախը ապահովելու, արտաքին հատվածից ակնկալվող ռիսկերի ուժգնացումը և ներքին տնտեսությունում գնաճային ճնշումները չեզոքացնելու նպատակով բանկերն ակնկալում են, որ ՀՀ կենտրոնական բանկը կվարի զսպող դրամավարկային քաղաքականություն և կպահպանի վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձր մակարդակը:
- ***Տոկոսադրույքներ***. Որոշ բանկերի կանխատեսմամբ ՀՀ ֆինանսական շուկայում վարկերի միջին տոկոսադրույքների էական փոփոխություններ չեն արձանագրվի, և տոկասադրույքները կպահպանվեն մոտավորապես նույն մակարդակում, իսկ բանկերի մի մասն էլ կանխատեսում է, որ ներգրավման տոկոսադրույքները հիմնականում կունենան աճի, իսկ տեղաբաշխման տոկոսադրույքները՝ նվազման միտում, ինչի արդյունքում կնվազի բանկերի տոկոսային մարժան: Ըստ գործիքների արժութային բացվածքի բանկերը հիմնականում սպասում են ֆինանսական շուկայում արտարժութային միջոցների տոկոսադրույքների որոշակի անկում, իսկ դրամային գործիքների մասով տոկոսադրույքների համեմատաբար կայուն վիճակ՝ որոշակի աճի հնարավորությամբ:
- ***Դրամային ռեսուրսների ծավալի աճ.*** Ենթադրվում է, որ պարտադիր ապահովագրության և կեսաթոշակային բարեփոխումների արդյունքում կավելանա դրամային երկարաժամկետ ռեսուրսների ծավալը՝ նպաստելով ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջև ժամկետայնության ճեղքվածքի կրճատմանը:
- ***Ֆինանսական հատվածում մրցակցության խորացում.*** 2012-2014թթ ընթացքում կխորանա մրցակցությունը ՀՀ առևտրային բանկերի միջև, առանձնապես ժամանակակից հեռահար սպասարկման բանկային ծառայությունների գծով: Որոշ բանկեր հավանական են համարում ՀՀ-ում բանկերի հետագա միացումները:

✓ ***<u>Կարգավորման դաշտի փոփոխություններ</u>***

- ՀՀ ԿԲ-ի կողմից ապադոլարացման միջոցառումների իրականացման շարունակականություն
- Բազելյան III համաձայնագրի որոշ տարրերի ներդրում հայաստանյան բանկերի համար
- իրացվելիության նորմատիվների մասնատումն ըստ արժութային խմբերի
- ակտիվների դասակարգման կարգում փոփոխությունների շարունակություն. արտարժութային ստանդարտ վարկերի համար նույնպես ավելի բարձր դասակարգման կշռի սահմանում

- կանխիկ դրամի շրջանառությունը սահմանափակող օրինագծերի ընդունում, ինչը կապահովի դրամական միջոցների լրացուցիչ ներհոսք բանկային համակարգ

Ամփոփելով ՀՀ բանկերի կանխատեսումները արտաքին հատվածի զարգացումների վերաբերյալ՝ նշենք, որ ընդհանուր առմամբ առաջիկա տարում, չբացառելով օտարերկրյա ռիսկերի պահպանումը, կանխատեսվում է ՀՀ տնտեսության հետագա աշխուժացում և դրանից ածանցված ՀՀ ֆինանսական համակարգում տեղի ունեցող դրական զարգացումներ:

Առևտրային բանկերի 2012-2014թթ. հիմնական նպատակները

2012-2014թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով ՀՀ առևտրային բանկերն իրենց նպատակները հիմնականում սահմանել են գործունեության որակական բարելավման և ծավալային ընդլայնման ուղղությամբ՝ սահմանելով հետևյալները.

- ✓ ***<u>Ծավալային աճ</u>***
  - ակտիվների/ վարկային պորտֆելի աճ
  - կապիտալի աճ
  - ներգրավված միջոցների աճ (այդ թվում՝ ավանդների, միջազգային կազմակերպություններից ներգրավված միջոցների, պարտատոմսերի թողարկման հաշվին)
  - վճարահաշվարկային ծառայությունների ծավալի և քանակի ավելացում
  - վճարային քարտերի թողարկման ծավալների աճ

- ✓ ***<u>Արդյունավետություն/շահութաբերություն</u>***
  - Շահութաբերության կամ շահույթի նպատակային ցուցանիշների ապահովում/բարձրացում
  - բաժնետոմսերի (բաժնետիրական կապիտալի) շուկայական արժեքի աճ
  - կապիտալի օգտագործման արդյունավետության բարձրացում
  - գործունեության արդյունավետության բարձրացում - ծախսերի կրճատում և ռեսուրսների արդյունավետ օգտագործում
  - ոչ տոկոսային եկամուտների (մասնավորապես միջնորդավճարների տեսքով ստացվող եկամուտների) աճ

- ✓ ***<u>Ռիսկերի զսպում</u>***
  - ակտիվների / վարկային պորտֆելի որակի ապահովում
  - ակտիվների դիվերսիֆիկացիա
  - իրացվելիության բավարար մակարդակի ապահովում
  - ռիսկերի կառավարման համակարգերի կատարելագործում
  - վարկունակության գնահատման նոր համակարգերի մշակում և դրանց աստիճանական ներդնում վարկավորման գործընթացներում
  - տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ժամկետային ակտիվների և պարտավորությունների բացասական ճեղքվածքի նվազեցում
  - ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի նվազում

- ✓ ***<u>Մարքեթինգային քաղաքականություն</u>***
  - մասնաճյուղային ցանցի ընդլայնում
  - հաճախորդների քանակի / շրջանակների ընդլայնում
  - որևէ հատվածում կամ որևէ ցուցանիշով առաջատար դիրքերի գրավում/ամրապնդում
  - շուկայում մասնաբաժնի ավելացում
  - ֆինանսական շուկայում նոր սեգմենտների գրավում
  - մատուցվող ծառայությունների ու առաջարկվող պրոդուկտների ցանկի / ծավալների ընդլայնում
  - սպասարկման որակի բարձրացում
  - բարի համբավի ձեռքբերում/ամրապնդում / ճանաչելիության բարձրացում
  - մարքետինգային քաղաքականությանը զարգացում

- համագործակցություն/համագործակցության ընդլայնում միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ
- որակի միջազգային ստանդարտի սերտիֆիկատի (ISO) և/կամ միջազգային վարկանշային ընկերության կողմից վարկանիշի ստացում

✓ ***<u>Կառավարման համակարգ</u>***

- կառավարման և ներքին հսկողության համակարգերի կատարելագործում
- կադրերի որակավորման բարձրացում և կառավարման բարելավում
- տեղեկատվական տեխնոլոգիաների արդիականացում/տեխնիկական վերազինում

Առևտրային բանկերի հիմնական ֆինանսական ցուցանիշների 2012-2014թթ. կանխատեսումները

Կապիտալ


(տե՛ս Հավելված 2)

Բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերով ներկայացված կանխատեսումների համաձայն՝ 31.12.2011-31.12.2014թթ. (այսուհետ 2012-2014թթ.) ընթացքում կապիտալը միջինում տարեկան կաճի 18%-ով:

2012-2014թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի ընդհանուր կապիտալը կաճի 63%-ով կամ 225 մլրդ դրամով, ինչի արդյունքում 2014թ. վերջի դրությամբ կկազմի 581 մլրդ դրամ:

2012-2014թթ. ընթացքում 12 բանկ նախատեսել է ընդհանուր 56 մլրդ դրամի չափով կանոնադրական կապիտալի համալրում իրականացնել, որոնցից 9 բանկ՝ արտաքին աղբյուրների հաշվին:

Կանոնադրական կապիտալի նկատմամբ շահույթի առաջանցիկ աճի արդյունքում կանոնադրական կապիտալի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում 2011թ.-ի 66%-ից կնվազի՝ 2014թ. հասնելով 50%-ի:



Պարտավորություններ


(տե՛ս Հավելված 2)


2012-2014թթ. ընթացքում ՀՀ առևտրային բանկերը կանխատեսել են ընդհանուր պարտավորությունների միջին տարեկան 18% աճ: Կանխատեսվող երեք տարիների ընթացքում պարտավորությունները կաճեն 63%-ով կամ 1 տրլն 100 մլրդ դրամով՝ 2014թ. կազմելով 2 տրլն 843 մլրդ դրամ:

Կանխատեսումների համաձայն՝ 2012-2014թթ. ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդները կավելանան 74%-ով կամ 700 մլրդ դրամով (տարեկան միջինը աճելով 20%-ով) և 2014թ. վերջին կկազմեն 1 տրլն 647 մլրդ դրամ: Արդյունքում, ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում կավելանա չորս տոկոսային կետով՝ 2011թ.-ի վերջի 54%-ից 2014թ. հասնելով 58%-ի:

2012-2014թթ. ֆիզիկական անձանց ավանդների աճը կանխատեսվում է, որ կլինի 81% կամ 455 մլրդ դրամ (տարեկան միջին աճը՝ 22%)՝ 2014թ. վերջին կազմելով 1 տրլն 14 մլրդ դրամ:

Իրավաբանական անձանց ավանդները կավելանան 63%-ով կամ 245 մլրդ դրամով (տարեկան աճը՝ 18%) և կկազմեն 633 մլրդ դրամ: Վերոնշյալի արդյունքում ավանդների կառուցվածքում փոքր-ինչ կավելանա ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը՝ 2011թ.-ի վերջի 59%-ից 2014թ. կազմելով 62%:





Ցպահանջ ավանդների աճի կանխատեսումները եռամյա կտրվածքով կազմում են 60% կամ 231 մլրդ դրամ (միջին տարեկան՝ 17%)՝ 2014թ. կազմելով 615 մլրդ դրամ:


Ժամկետային ավանդները 2012-2014թթ. կաճեն 83%-ով կամ 469 մլրդ դրամով (տարեկան աճը՝ 22%) և 2014թ. վերջին կկազմեն 1 տրլն 33 մլրդ դրամ:


Արդյունքում ժամկետային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդների մեջ 2011 թվականի վերջի 60%-ից 2014 թվականին կհասնի մինչև 63%:

2012-2014թթ. ընթացքում ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են ավելացնել այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված միջոցները 90%-ով կամ 193 մլրդ դրամով (տարեկան միջինը 24%-ով)՝ 2014թ. վերջին հասցնելով դրանց ծավալը 409 մլրդ դրամի:

Նշված 193 մլրդ դրամից 122 մլրդ-ը բանկերը նախատեսում են ներգրավել միջազգային ֆինանսական կառույցներից:

Արդյունքում այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված ավանդների ու վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում 2011թվականի վերջի համեմատ կավելանա երկու տոկոսային կետով և 2014թ. վերջին կկազմի 14%:





1. Թղթակցային հաշիվներ
2. Ֆիզիկական անձանց ցպահանջ միջոցներ և հաշիվներ
3. Իրավաբանական անձանց և հիմնարկների ցպահանջ միջոցներ և հաշիվներ
4. Պարտավորություններ գանձապետարանի նկատմամբ
5. Բանկերից և ՀՀ ԿԲ-ից ներգրավված ավանդներ և վարկեր
6. Այլ ֆինանսավարկային կազմակերպություններից ներգրավված ավանդներ և վարկեր
7. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ
8. Իրավաբանական անձանց և հիմնարկների ժամկետային ավանդներ
9. Այլ պարտավորություններ

Ակտիվներ

(տե՛ս Հավելված 2 և 4)

2012-2014թթ. ՀԶԾ-ներով ՀՀ առևտրային բանկերը կանխատեսել են ակտիվների միջին տարեկան 18% աճ: Եռամյա կտրվածքով ՀՀ բանկային համակարգի ակտիվները կաճեն 63%-ով կամ 1 տրլն 325 մլրդ դրամով, ինչի արդյունքում 2014թ. վերջին բանկային համակարգի ակտիվները կկազմեն 3 տրլն 424 մլրդ դրամ:


Ակտիվների միջին տարեկան աճի տեմպը՝

- նախորդ երեք տարիների համար՝ 26%
- կանխատեսվող առաջիկա երեք տարիների համար՝ 18%

Վարկային պորտֆելի միջին տարեկան աճի տեմպը՝


- նախորդ երեք տարիների համար՝ 25%
- կանխատեսվող առաջիկա երեք տարիների համար՝ 25%


Արդյունքում կմեծանա վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում՝ 2014թ. վերջին 2011թ.-ի վերջի համեմատ ավելանալով 10 տոկոսային կետով և կազմելով 69%:



Բանկային համակարգի ակտիվների վերոնշյալ աճը նախատեսվում է հիմնականում ի հաշիվ վարկերի, ինչի արդյունքում կմեծանա վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում՝ 2014թ. վերջին հասնելով 69%-ի (2011 թվականի վերջին՝ 58%):

2012-2014թթ. ընթացքում բանկային համակարգի վարկերը կաճեն 1 տրլն 158 մլրդ դրամով կամ 95%-ով (միջին տարեկան 25% աճ) և 31.12.2014թ. դրությամբ կկազմեն 2 տրլն 375 մլրդ դրամ:





1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ ՀՀ ԿԲ-ում և բանկերում
3. Բանկերում և այլ ֆինանսավարկային կազմակերպություններում տեղաբաշխված դեպոզիտներ և վարկեր
4. Վարկեր տնտեսությանը
5. Պետական արժեթղթեր
6. Լիզինգ և ֆակտորինգ
7. Հիմնական միջոցներ
8. Այլ ակտիվներ


Ակտիվների միջին տարեկան աճի տեմպը՝

- նախորդ երեք տարիների համար՝ 26%
- կանխատեսվող առաջիկա երեք տարիների համար՝ 18%

Կապիտալի միջին տարեկան աճի տեմպը՝


- նախորդ երեք տարիների համար՝ 15%
- կանխատեսվող առաջիկա երեք տարիների համար՝ 18%

Ակտիվների և կապիտալի համահունչ աճի արդյունքում ՀՀ բանկային համակարգի լևերիջի (ակտիվներ/կապիտալ) ցուցանիշը 2014թ. վերջին 2011թ.-ի վերջի համեմատ չի փոխվի՝ կազմելով 6:





2012-2014թթ. ՀԶԾ-ներով կանխատեսված ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի աճը նախատեսվում է հիմնականում ի հաշիվ առևտրի ոլորտի միջին տարեկան 24% աճի (վարկային պորտֆելի եռամյա աճի մեջ 22% մասնակցություն), սպառողական վարկերի միջին տարեկան 27% աճի (վարկային պորտֆելի եռամյա աճի 20%), հանքագործական արդյունաբերության և մշակող արդյունաբերության՝ 83% և 20% միջին տարեկան աճերի (վարկային պորտֆելի եռամյա աճի համապատասխանաբար 12% և 9%):

Հիփոթեքային վարկերի պորտֆելը 2012-2014թթ. ընթացքում կաճի միջին տարեկան 23%-ով՝ համակարգի եռամյա աճին նպաստելով 8%-ով:



1	*Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն*
2	*Հանքագործական և մշակող արդյունաբերություն*
3	*Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում*
4	*Շինարարություն*
5	*Առևտուր*
6	*Ֆինանսական և ապահովագրական գործունեություն*
7	*Հիփոթեքային վարկեր*
8	*Սպառողական վարկեր*
9	*Տնտեսության այլ ճյուղեր*





Բանկերի կանխատեսումների արդյունքում՝ 2014թ. վերջին՝ 2011թ.-ի վերջի համեմատ ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի կառուցվածքը որոշակի փոփոխություններ կկրի, մասնավորապես. վարկային պորտֆելում կպահպանվի առևտրի ճյուղի վարկերի ամենամեծ մասնաբաժին՝ 31.12.2014թ. կազմելով 22%, 3 տոկոսային կետով կաճի հանքագործական և մշակող արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը՝ 2014թ. վերջին կազմելով

17%: Կնվազի ֆինանսական հատվածի վարկերի տեսակարար կշիռը՝ 2011թ.-ի վերջի 7%-ի փոխարեն 2014թ.-ի վերջին ունենալով 4%:

Ինչ վերաբերում է ըստ ռիսկայնության դասերի վարկերի կառուցվածքին, բանկերի առաջիկա երեք տարիների համար կանխատեսել են "վատորակ" վարկերի տեսակարար կշռի աստիճանական նվազում, ինչի արդյունքում 2014թ. վերջին "չաշխատող վարկեր/ընդհանուր վարկեր" հարաբերակցությունը կհասնի 3.1% (2011թ. վերջին նույն ցուցանիշը կազմել է 3.4%): Հատկանշական է, որ բանկերը չաշխատող վարկերի ամենաբարձր մակարդակը կանխատեսում են 2012թ-ին՝ 3.5%:

<u>Ֆինանսական արդյունքներ</u>

(տե՛ս Հավելվածներ 2 և 3)


Համաձայն 2012-2014թթ. ՀԶԾ-ներով ՀՀ առևտրային բանկերն իրենց եկամուտների և ծախսերի կառուցվածքում կանխատեսել են հետևյալ զարգացումները. կանխատեսվող ժամանակահատվածքում բանկային համակարգի համախառն եկամուտները կավելանան 166 մլրդ դրամով կամ 60%-ով (միջին տարեկան աճը՝ 17%) և 2014թ. կկազմեն 444 մլրդ դրամ: Բանկային համակարգի համախառն ծախսերը 2014թ.՝ 2011թ.-ի համեմատ կավելանան 95 մլրդ դրամով կամ 40%-ով (միջին տարեկան աճը՝ 12%) և կկազմեն 332 մլրդ դրամ:

Կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում համախառն եկամուտների կառուցվածքում 7 տոկոսային կետով կավելանա տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 2014թ. կազմելով 70%: Հատկանշական է, որ և՛ համախառն եկամուտների և՛ համախառն ծախսերի կառուցվածքում բանկերը կանխատեսում են հաստատուն պահել ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի տեսակարար կշիռները:


2012-2014թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի զուտ տոկոսային եկամուտները կավելանան 68 մլրդ դրամով կամ 72%-ով (միջին տարեկան 20%-ով) և 2014թ. կկազմեն 164 մլրդ դրամ, ընդ որում, տոկոսային եկամուտների միջին տարեկան աճի տեմպը (21%) փոքր-ինչ զիջում է տոկոսային ծախսերի աճի տեմպին (22%):

Զուտ ոչ տոկոսային եկամուտները 2012-2014թթ. ընթացքում կնվազեն 3 մլրդ դրամով կամ 10%-ով (միջին տարեկան՝ 3%-ով) և 2014թ. կկազմեն -38 մլրդ դրամ:

Հատկանշական է, որ պլանավորվող ժամանակահատվածում ոչ տոկոսային եկամուտների միջին տարեկան աճի տեմպի (17%) ոչ տոկոսային ծախսերի աճի տեմպին (12%) գերազանցելու պայմաններում՝ ոչ տոկոսային եկամուտների և ոչ տոկոսային ծախսերի բացասական ճեղքվածքը ավելի կմեղմանա, այսինքն՝ եթե 2011թ.-ի արդյունքներով ոչ տոկոսային ծախսերի 59%-ն էր սպասարկվում ոչ տոկոսային եկամուտների հաշվին, ապա բանկերի կանխատեսումներով 2014թ. այդ ցուցանիշը կկազմի 68%:



Համաձայն ՀՀ առևտրային բանկերի կանխատեսումների՝ բանկերի կողմից ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին կատարված զուտ մասհանումները 2012-2014թթ. կնվազեն 5 մլրդ դրամով կամ 27%-ով, և 2014թ. կկազմեն 14 մլրդ դրամ:



2012-2014թթ. ՀՋԾ-ների համաձայն՝ կանխատեսվող ժամանակաշրջանում բանկային համակարգի զուտ մասհանումներ/համախառն ակտիվներ ցուցանիշը 2011թ.-ի 0.9%-ից կիջնի 0.4%-ի:

2012-2014թթ. բանկային համակարգի զուտ շահույթը կաճի 57 մլրդ դրամով կամ 2.8 անգամ (տարեկան աճելով միջինում 40%-ով), և 2014թ. համակարգը կապահովի 89 մլրդ դրամի զուտ շահույթ:

Կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում բանկային համակարգի զուտ տոկոսային մարժան[2] կտատանվի 4,9%-5.2% (2011թ.՝ 5.1%):

Բանկերի ակտիվների շահութաբերությունը բնութագրող զուտ շահույթ/միջին ակտիվներ ցուցանիշը (ROA), ըստ կանխատեսումների, 2012-2014թթ. կտատանվի 2.2%-2.8% (2011թ. 1.7%), իսկ

[2] *զուտ տոկոսային եկամուտ/միջին ակտիվներ*

կապիտալի շահութաբերությունը բնութագրող զուտ շահույթ/ կապիտալ (ROE) ցուցանիշը՝ 12.7%-16.6% միջակայքում (2012թ.՝ 9.5%):

Կանխատեսվող երեք տարիների միջին արդյունքներով բանկերը կարելի է բաժանել մի քանի խմբի ՝

- ✓ ըստ ROA-ի մեծության՝
  - 3.5% - ից բարձր ROA ունեցող բանկեր՝ 5 բանկ,
  - 2.5% - 3.5% ROA ունեցող բանկեր՝ 5 բանկ,
  - 1.5% - 2.5% ROA ունեցող բանկեր՝ 7 բանկ,
  - 1.5%- ից ցածր ROA ունեցող բանկեր՝ 4 բանկ:
- ✓ ըստ ROE-ի մեծության՝
  - 20% - ից բարձր ROE ունեցող բանկեր՝ 4 բանկ,
  - 16% - 20% ROE ունեցող բանկեր՝ 4 բանկ,
  - 11% - 16% ROE ունեցող բանկեր՝ 5 բանկ,
  - 8% - 11% ROE ունեցող բանկեր՝ 5 բանկ,
  - 8% - ից ցածր ROE ունեցող բանկեր՝ 3 բանկ:

Վճարահաշվարկային գործունեություն


(տե՛ս Հավելված 6)

Բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերով ներկայացված կանխատեսումների համաձայն՝ 2012-2014թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի **հաճախորդների քանակը** կավելանա 54%-ով կամ 779 հազարով (միջին տարեկան աճը 15%):


Կանխատեսված աճի արդյունքում 2014թ. վերջի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր հաճախորդների քանակը կկազմի 2.2 մլն:

Կանխատեսումների համաձայն՝ 2012-2014թթ. ընթացքում **վճարային քարտերի քանակը** կավելանա 96%-ով կամ 937 հազար քարտով, որի արդյունքում 2014թ.-ի վերջի դրությամբ այն կկազմի 1.9 մլն:


Համաձայն բանկերի կողմից կատարված կանխատեսումների, վճարային քարտերի, ՊՈՍ-տերմինալների և ԱԳՄ-ների միջին տարեկան աճը 2012-2014թթ. Ընթացքում կկազմի համապատասխանաբար 25%, 31% և 18%:



Համաձայն բանկերի կողմից կատարված կանխատեսումների, ֆիզիկական անձանց կողմից դեպի Հայաստան և դեպի արտասահման միջազգային փոխանցումները կաճեն համապատասխանաբար միջին տարեկան 18%-ով և 14%-ով, իսկ զուտ ներհոսքի միջին տարեկան աճը կկազմի 21%:



Բանկերի կանխատեսումների համաձայն քարտերով անկանխիկ գործառնությունների մասնաբաժինն ընդհանուր գործառնություններում փոքր-ինչ կաճի:



ՊՈՍ-տերմինալների քանակը կավելանա 1.3 անգամ կամ 7 հազարով՝ 2014թ.-ին կազմելով 13 հազար:

ԱԳՄ-ների աճը առաջիկա երեք տարիներին կկազմի 63% կամ 635 նոր ԱԳՄ, իսկ 3 տարի հետո բանկերը նախատեսում են արդեն ունենալ 1648 ԱԳՄ-ներ:

Վճարային քարտերով գործառնությունները 2012-2014թթ. ընթացքում կաճեն 1.1 անգամ կամ 709 մլրդ դրամով՝ 2014թ.-ին կազմելով 1.4 տրլն դրամ:

Կանխատեսումների համաձայն ֆիզիկական անձանց կողմից Հայաստան և դեպի արտասահման կատարված փոխանցումները կավելանան համապատասխանաբար 63%-ով և 47%-ով, որի արդյունքում **ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոխանցումների զուտ ներհոսքը** նույն ժամանակահատվածում կաճի 78%-ով կամ 206 մլրդ դրամով՝ կազմելով 469 մլրդ դրամ:

III ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ առևտրային բանկերի 2012-2014թթ. ՀԶԾ-ներով արտաքին միջավայրի և խնդիրների կատարողականի վերլուծությունների հիման վրա առանձնացված բանկերի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները ներկայացված են հետևյալ խմբավորմամբ.

Ուժեղ կողմեր

- ✓ *Ռիսկերի կառավարում*
  - Կապիտալացման բարձր/ բավարար մակարդակ
  - Իրացվելիության բարձր մակարդակ
  - Ակտիվների/վարկային պորտֆելի բարձր որակ
  - Վարկային պորտֆելի բարձր դիվերսիֆիկացիա
  - Ռեսուրսների աղբյուրների դիվերսիֆիկացման բարձր մակարդակ
  - Բանկային ռիսկերի (հատկապես՝ վարկային ռիսկի) կառավարման բարձր մակարդակ, ռիսկերի ապահովագրության առկայություն
  - Ճգնաժամերին դիմակայելու գործուն ծրագրի առկայություն

- ✓ *Կորպորատիվ կառավարում*
  - Բարձր կորպորատիվ կուլտուրա
  - Որակյալ կադրերի առկայություն/ պրոֆեսիոնալ ներուժ
  - Կազմակերպակառավարչական համակարգերի, ներքին հսկողության համակարգերի արդյունավետություն
  - Որակի կառավարման համակարգի առկայություն/շարունակական բարելավում
  - զարգացած տեղեկատվական և տեխնոլոգիական ենթակառուցվածք/տեխնիկական և տեխնոլոգիական զինվածության բարելավման արագ տեմպեր

- ✓ *Արդյունավետություն / շահութաբերություն*
  - Զուտ տոկոսային եկամուտների բարձր մակարդակ
  - Վարչակառավարչական ծախսերի ցածր մակարդակ
  - Բարձր շահութաբերություն
  - Եկամուտներ և ծախսերի օպտիմալ կառուցվածք

- ✓ *Մարքեթինգ*
  - Ծառայությունների ընդգրկուն փաթեթի տրամադրում
  - Ճկուն սակագնային քաղաքականություն
  - Մասնաճյուղերի/բանկոմատների լայն ցանց/արագ ընդլայնում
  - Առաջատար/ամուր մրցակցային դիրք որևէ ոլորտում/տարածաշրջանում
  - Բանկային համակարգում/որևէ ոլորտում մեծ փորձի առկայությունը
  - Սպասարկման/մատուցվող ծառայությունների բարձր որակ
  - Միջազգային վարկանշային ընկերության կողմից շնորհված վարկանիշի առկայությունը
  - Ակտիվ վարկային քաղաքականություն
  - Հաճախորդների հաստատուն բազայի և բանկի նկատմամբ նրանց վստահության առկայություն
  - Ձևավորված բարի համբավ, բարձր հեղինակություն ֆինանսական համակարգում
  - Նորույթների պարբերական մշակում/ներդրում

- Շուկայի փոփոխություններին արագ արձագանքելու/ադապտացվելու ունակություն
- Բավարար նյութատեխնիկական բազա և տարածք/հարմարավետ շենքային պայմաններ

✓ *<u>Համագործակցություն</u>*

- Որպես բաժնետեր/գործընկեր միջազգային հեղինակավոր ֆինանսական կազմակերպության առկայություն
- Բաժնետերերի օժանդակությունը միջոցների ներգրավման մեջ
- Առաջնակարգ բանկերում թղթակցային հաշիվների առկայություն /թղթակցային հաշվների լայն ցանց
- Բյուջեի սպասարկում, պետական ծրագրերում մասնակցություն
- Միջազգային հեղինակավոր ֆինանսական կառույցների հետ համագործակցություն, դրանցից ֆինանսավորում ստանալու հնարավորություն
- Մի շարք վճարային համակարգերին անդամակցություն

Թույլ կողմեր

✓ *<u>Ռիսկերի կառավարում</u>*

- Կապիտալացման ցածր մակարդակ
- Դասակարգված վարկերի առկայություն
- Ակտիվների դիվերսիֆիկացիայի ոչ բավարար մակարդակ
- Ներգրավված միջոցների դիվերսիֆիկացման ցածր մակարդակ
- Դրամային ռեսուրսների անբավարար մակարդակ
- Միջազգային ֆինանսական շուկաների զարգացումների նկատմամբ զգայունություն (ներգրավվող միջոցների տեսանկյունից)
- հիմնական ավանդների համեմատաբար ցածր տեսակարար կշիռը պարտավորությունների կազմում
- ակտիվների և պարտավորությունների միջև առկա ճեղքվածքները որոշ ժամկետային խմբերում
- Ռիսկերի կառավարման թերի համակարգեր/խնդրահարույց վարկերի հետ աշխատող առանձին ստորաբաժանման բացակայություն

✓ *<u>Կորպորատիվ կառավարում</u>*

- Ներքին հսկողության համակարգերի անկատարություն
- Ծրագրային ապահովվածության հետ կապված/տեխնոլոգիական թերություններ/անկատարություններ
- Կադրային քաղաքականության անկատարություններ/կադրերի որակավորման ցածր մակարդակ

✓ *<u>Արդյունավետություն / շահութաբերություն</u>*

- Բանկի ծավալային ցուցանիշների/դրանց աճի տեմպերի ցածր մակարդակ
- Զուտ ոչ տոկոսային եկամտի մեծ ճեղքվածք
- Ծախսերի/ծախսատարության բարձր մակարդակ/ցածր արդյունավետություն
- Շահութաբերության ոչ բավարար մակարդակ

- ✓ *Մարքեթինգ*
    - Ծառայությունների տեսականիի անբավարար մակարդակ / տեսականի
    - Ֆինանսական շուկայում / առանձին հատվածներում փոքր մասնաբաժին
    - ՀՀ ֆինանսական շուկայում անբավարար ճանաչվածության մակարդակ
    - Մրցակիցներից քիչ տարբերակում
    - Հաճախորդների բազայի թերզարգացվածություն
    - Մասնաճյուղային ցանցի թերզարգացվածություն / անկատարություններ
    - Մարկետինգային քաղաքականության ոչ բավարար ակտիվություն / արդյունավետություն

- ✓ *Համագործակցություն*
    - Սեփականատերերի/գործընկերների կազմում ինստիտուցիոնալ կառույցի բացակայություն
    - Միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության և օտարերկրյա ֆինանսական ծրագրերին մասնակցության բացակայություն
    - Երկարաժամկետ/էժան ռեսուրսների անբավարար մակարդակ/հասանելիության սահմանափակություն
    - Ոչ ռեզիդենտների հետ կապերի անբավարար մակարդակ

Հնարավորություններ

- ✓ *Համաշխարհային տնտեսություն*
    - Միջազգային շուկաներում տոկոսադրույքների ցածր մակարդակի պահպանում/միջազգային կառույցներից էժան միջոցների ներգրավում
    - համաշխարհային (մասնավորապես Ռուսաստանի) տնտեսության աշխուժացում
    - Գունավոր մետաղների գների աճ

- ✓ *Ներքին տնտեսություն*
    - ՀՀ ՀՆԱ աճ/ տնտեսության ակտիվացում, արտահանման աճ
    - բնակչության եկամուտների, տրանսֆերտների/դրամական հոսքերի, սպառման ծավալների աճ
    - Շինարարության ոլորտի զարգացում
    - Փոխարժեքի կայունություն
    - Ազատ տնտեսական գոտիների և ազատ առևտրի գոտիների գործունեություն

- ✓ *Ֆինանսաբանկային հատված*
    - Ֆինանսական համակարգի շարունակական զարգացման հեռանկար/միտումներ
    - Մրցակցության թուլացում
    - Բանկային ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ, չբավարարված պահանջարկի առկայություն, ժամանակակից բանկային ծառայությունների ընդլայնում և տարածում
    - Բնակչության եկամուտների աճով պայմանավորված բանկերի կողմից ներգրավվող ավանդների ծավալի աճ
    - Տնտեսության ակտիվացմամբ պայմանավորված վարկային պորտֆելի որակի բարելավում
    - Վարկերի նկատմամբ առկա մեծ/ աճող պահանջարկը
    - Միջազգային ֆինանսական կառույցների հետ համագործակցության հնարավորություն
    - Հուսալի հաճախորդների առկայություն
    - Ֆինանսական համակարգում իրականացվող բարեփոխումներ (կենսաթոշակային ռեֆորմ, պարտադիր ապահովագրտեսակների ներդրում)

- ✓ *Իրավական դաշտ*
    - Ստվերային տնտեսության դեմ պայքարի պետական քաղաքականություն
    - Տնտեսության խթանման և սոցիալական բարեփոխման պետական քաղաքականություն և տարատեսակ ծրագրերի իրականացում
    - ՀՀ օրենսդրական դաշտի բարեփոխում, ֆինանսական ենթակառուցվածքների և ֆինանսական շուկաների զարգացում
    - Ավանդների երաշխավորման գումարների ավելացումը

Սպառնալիքներ

- ✓ *Համաշխարհային տնտեսություն*
    - Համաշխարհային տնտեսական աճի դանդաղում, ֆինանսական շուկաներում անբարենպաստ զարգացումներ, համաշխարհային ճգնաժամի երկրորդ ալիքի հավանականություն
    - Տոկոսադրույքների աճը միջազգային շուկաներում
    - Գործընկեր երկրներում առկա տնտեսական և քաղաքական խնդիրներ
    - Նավթի/անշարժ գույքի գների նվազում
    - Գնաճային ճնշումներ/ միջազգային ապրանքահումքային շուկաներում գների աճ

- ✓ *Ներքին տնտեսություն*
    - ՀՀ տնտեսական աճի դանդաղում կամ աճի ցածր տեմպեր
    - Տոկոսադրույքների էական տատանումներ
    - Տնտեսության բարձր դոլարիզացիայի մակարդակ
    - Արժույթների փոխարժեքների անկայունություն/անորոշություն
    - Գնաճի բարձր մակարդակ/սպասումներ
    - Տնտեսությունում առկա սոցիալական խնդիրներ/բնակչության ցածր կենսամակարդակ
    - Գործազրկության աճ, տրանսֆերտների և բնակչության եկամուտների նվազում
    - Ստվերային տնտեսության մեծ ծավալներ
    - Ներքին շուկայում ռեսուրսների սահմանափակ լինելը

- ✓ *Ֆինանսաբանկային հատված*
    - Բարձր վարկային ռիսկ
    - ՀՀ ԿԲ կոշտ դրամավարկային քաղաքականություն/վերաֆինանսավորման տոկոսադրույքի ակնկալվող բարձր մակարդակը
    - Մրցակցության սրացում / նոր ինստիտուցիոնալ մասնակիցների (մասնավորապես ներդրումային ֆոնդերի) մուտքը շուկա
    - Արտաքին աղբյուրներից միջոցների ներգրավման դժվարություններ
    - Տնտեսական անբարենպաստ միջավայրով պայմանավորված բանկերի ակտիվների որակի վատացում

- ✓ *Իրավական դաշտ*
    - Օրենսդրական կամ ԿԲ նորմատիվային դաշտի անկանխատեսելի/անբարենպաստ փոփոխություններ (մասնավորապես դոլարիզացիայի դեմ պայքարին ուղղված, իրացվելիության նոր նորմատիվների հնարավոր սահմանում)
    - ՀՀ ԿԲ կողմից պարտադիր պահուստավորման պահանջների փոփոխություններով
    - Իրացվելիության նորմատիվների տարանջատում ըստ արժույթների

- ✓ *<u>Քաղաքական ռիսկ</u>*
    - Հայ-ադրբեջանական հակամարտության սրում, պատերազմի վերսկսման հավանականություն
    - Արտաքին ճնշման ուժեղացում Իրանի վրա, ԱՄՆ-ի հետ պատերազմի հավանականություն
    - Խորրդարանական և նախագահական ընտրություններ

ՀՀ առևտրային բանկերը առավել հակված են նշելու արտաքին միջավայրից բխող սպառնալիքները, որոնց դիմակայելու որոշ միջացառումներ են իհարկե առաջարկվում են, սակայն դրանք որպես հնարավորություն օգտագործելու տարբերակներ գրեթե ոչ մի բանկ չի քննարկում:

IV ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ըստ 2012-2014թթ.-ի ՀԶԾ-ների՝ ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են կառավարման համակարգերի կատարելագործման հետևյալ միջոցառումները.

- կորպորատիվ կառավարման համակարգի և կորպորատիվ կուլտուրայի բարելավում
- ներքին հսկողության համակարգերի կատարելագործում
- ռիսկերի կառավարման նոր համակարգերի ներդրում/գործողների կատարելագործում
- տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համակարգերի կատարելագործում, ներքին տեղեկատվական հոսքերի արդյունավետության բարձրացում
- որակի կառավարման համակարգի ներդրում/կատարելագործում
- նոր հանձնաժողովների/կառուցվածքային միավորների ստեղծում
- նոր կազմակերպակառավարչական (այդ թվում՝ տարածքային կառավարման) համակարգի ձևավորում/նախկինի բարելավում
- կառուցվածքային ստորաբաժանման գործառույթների ձևափոխում
- հանձնաժողովների աշխատանքների իրականացում՝ ուղղված ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը
- տեղեկատվության թափանցիկության բարձրացում
- հաստատված ընթացակարգերի և ներքին իրավական ակտերի կատարելագործում/համապատասխանեցում միջազգային ստանդարտների
- պլանավորման գործընթացների և կատարողականների վերլուծության գործընթացների հետագա կատարելագործում

ՀՀ առևտրային բանկերում արդեն իսկ առկա ցուցանիշների որոշակի վիճակագրական շարքերը հնարավորություն են տալիս բանկերին վերլուծել նախկինում ի հայտ եկած միտումները, ռիսկերը և դրանք օգտագործել ցուցանիշների կանխատեսման և ռիսկերի գնահատման համար:

Այս բնագավառում բանկերն առավել հաճախ սկսել են դիմել միջազգային լավագույն փորձին՝ ձգտելով արդեն ընդունված մեթոդները լրացնել ռիսկերի կառավարման առավել արդյունավետ մեթոդներով:

2012-2014թթ. հեռանկարային զարգացման ծրագրերով՝ ՀՀ առևտրային բանկերը առանձնացրել են ռիսկերի կառավարման հատկյալ մեթոդները.

✓ *Վարկային ռիսկ*

- վարկային ռեսուրսների դիվերսիֆիկացիա (ոչ միայն վարկառուների ճյուղային պատկանելությամբ, այլ նաև ըստ նրանց դրամական հոսքերի աղբյուրների)
- վարկառուների վարկունակության/վարկարժանության գնահատման նոր/լրացուցիչ գործիքների կիրառում, յուրաքանչյուր վարկառուի գծով վարկային ռիսկի գնահատում
- վարկառուների առավել զգուշավոր ընտրություն
- վարկառուի ֆինանսական վիճակի և նրա կողմից վարկը մարելու հնարավորության նկատմամբ մոնիտորինգի, վարկային պայմանագրի պայմանների կատարման և վարկի նպատակային օգտագործման նկատմամբ անընդհատ հսկողություն

- սթրես-սցենարների կիրառում
- վարկավորման/ներդրումների ներքին սահմանաչափերի կիրառում
- վարկային ռիսկի մակարդակի ուղենիշների սահմանում
- կարճաժամկետ կամ փոքր ծավալի վարկերի տեսակարար կշռի մեծացումը
- վարկավորման գործընթացի կանոնակարգման կատարելագործում և ստանդարտացում
- վարկային ռիսկերի գնահատման ուսուցում և ժամանակակից մեթոդոլոգիայի ներդրում
- կենտրոնացված վարկերի տվյալների բազայի կատարելագործում/վարկային ռեգիստրի ստացվող տվյալների կիրառում
- տնտեսության ճյուղերի/ առանձին ոլորտների վերլուծությունների իրականացում՝ վարկավորման համար առավել նպատակահարմար ճյուղերը բացահայտելու և վարկային ռիսկը ցածր պահելու նպատակով
- գրավի գնահատման առավել խիստ մեթոդներ, օր՝ գրավների վերագնահատում շուկայական արժեքով, դրանց մանրակրկիտ ուսումնասիրություն, վարկային պայմանագրերում լրացուցիչ ապահովվածության/երաշխավորության նախատեսում
- գրավի առարկաների ապահովագրության պահանջ
- փոխադարձ պահանջների վերջնահաշվարկ
- ֆինանսական խմբի մեջ մտնող բանկերի կողմից օգտագործվող՝ վարկային ռիսկի կառավարման համակարգի կիրառում

✓ *<u>Իրացվելիության ռիսկ</u>*

- բարձր իրացվելի ակտիվների անհրաժեշտ մակարդակի ապահովում
- իրացվելիության ռիսկի շեմի ներքին պահանջների կիրառում
- սթրես-սցենարների կիրառում
- GAP, ՔԱՄԵԼՍ և դյուրացիա մեթոդների կիրառում
- ներգրավված միջոցների դիվերսիֆիկացիա
- դրամական հոսքերի կանխատեսում, միջոցների տեղաբաշխման և ներգրավման պլանավորում՝ ելնելով իրացվելիության անհրաժեշտ մակարդակի հաշվարկից
- ընթացիկ իրացվելիության ամենօրյա վերահսկողություն և ժամկետային իրացվելիության պլանավորում
- համապատասխան ծրագրային ապահովման կիրառում՝ իրացվելության գնահատման և հաշվետվությունների պատրաստման համար
- իրացվելիության ռիսկի կառավարումը կարգավորող ներքին նորմատիվ ակտերի կիրառում/կատարելագործում

✓ *<u>Արտարժութային ռիսկ</u>*

- փակ արտարժութային դիրքի պահպանում / բաց դիրքի սահմանափակում
- ռիսկի գնահատում ստանդարտ, VAR և GAP մեթոդներով
- արտարժութային ռիսկի հեջավորում
- սթրես-սցենարների կիրառում
- արտարժույթի ռիսկի ամենօրյա մոնիթորինգ

- ✓ *Տոկոսադրույքի ռիսկ*
  - սփրեդի, մարժայի և ճեղքվածքի վերլուծություն
  - ռիսկի գնահատում ստանդարտ, GAP, դյուրացիա մեթոդներով
  - սթրես-սցենարների կիրառում
  - տոկոսադրույքների կանխատեսումներ
  - համապատասխան ծրագրային ապահովման կիրառում/մոդելի առկայություն՝ տոկոսադրույքի ռիսկի գնահատման և համապատասխան հաշվետվությունների պատրաստման համար
  - ֆիքսված տոկոսադրույքների կիրառում

- ✓ *Գործառնական ռիսկ*
  - ներքին կանոնակարգման կատարելագործում
  - ներքին հսկողության համակարգերի կատարելագործում
  - գործառնական ռիսկերի կառավարման ամբողջական համակարգի ներդրում
  - գործառնական ռիսկի կառավարման համար անհրաժեշտ տվյալների միասնական բազայի ձևավորում և դրա հիման վրա ռիսկի հաշվարկման մաթեմատիկական մոդելների մշակում
  - գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի անցումը On-line ռեժիմի
  - տեխնիկա-ծրագրային ապահովման միջոցների ներդրում, անվտանգության համակարգերի կատարելագործում և նոր սահմանափակող միջոցառումների իրականացում
  - աշխատակիցների ընդունման, դրանց գործառնությունների թափանցիկության և պրոֆեսիոնալիզմի ապահովման միջոցառումների իրականացում
  - արտակարգ իրավիճակներից ապաքինման ծրագրերի մշակում, ներքին աուդիտի գործառույթի հզորացում

- ✓ *Կենտրոնացումների ռիսկ*
  - միջոցների բազմազանեցում՝ ըստ տարբեր չափորոշիչների

- ✓ *Գնային ռիսկ*
  - ներդրումային քաղաքականությամբ որոշակի սահմանափակումների սահմանում, ինչպես նաև ռիսկերի բացահայտման, վերահսկման և չափման ուղղությամբ ամենամսյա վերլուծությունների իրականացում:

V ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործումը ՀՀ առևտրային բանկերի կողմից տարեցտարի ավելի է կարևորվում: Եվ այդ կոնտեքստում կադրային քաղաքականությամբ նախատեսված միջոցառումների մեջ հիմնական շեշտը դրվում է կադրերի որակավորման բարձրացման վրա:

2012-2014թթ. ՀՋԾ-ներով՝ նախատեսվել են կադրային քաղաքականության բարելավմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

- ✓ *Որակավորման բարձրացում*
  - կադրերի (հատկապես ռիսկերի կառավարման մասնագետների) որակավորման բարձրացում՝ նրանց ուսուցման, վերապատրաստման, ուսուցողական դասընթացների կազմակերպման, գործընկերների հետ փորձի փոխանակման և ՀՀ-ում ու արտերկրում կազմակերպված սեմինարներին մասնակցության միջոցով
  - կադրերի որակավորման / մասնագիտական համապատասխանելիության ստուգում ատեստավորման և աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմի միջոցով
  - սեփական ուսումնական կենտրոնի հիմնադրում

- ✓ *Մոտիվացում*
  - նյութական և ոչ նյութական մոտիվացիոն մեխանիզմների ներդրում՝ աշխատանքի նկատմամբ ստեղծագործ մոտեցումը խրախուսելու և գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով
  - բանկի աշխատակիցներին արտոնյալ պայմաններով վարկեր տրամադրելու քաղաքականության կիրառում / բարելավում
  - աշխատակիցների համար սոցիալական փաթեթի մշակում, աշխատակիցների առողջության ապահովագրության իրականացումը
  - բանկի/մասնաճյուղի ֆինանսական արդյունքներից ածանցված աշխատավարձի սահմանում

- ✓ *Գնահատում*
  - աշխատակիցների արդյունավետության գնահատման չափանիշների համակարգի ներդնում/ կատարելագործում
  - աշխատակիցների վարձատրման և առաջխաղացման համակարգի ներդրում՝ հիմնված աշխատանքի կատարողականի և արդյունավետության գնահատման վրա

- ✓ *Կառավարում*
  - անձնակազմի կառավարման կանոնակարգման դաշտի բարելավում
  - կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերի մշակում, ինչպես նաև աշխատակիցների պաշտոնական պարտականությունների և որակավորմանը ներկայացվող պահանջների ամրագրում
  - մասնագետների համալրման և հաջորդականության ապահովման մեթոդների կատարելագործում, նոր կադրերի ընտրության մրցութային եղանակի կիրառում, թեստերի, հարցազրույցների անցկացում

- կադրային ռեզերվի ձևավորման/համալրման մեխանիզմների կիրառում
- մարդկային ռեսուրսների ճիշտ տեղաբաշխում և կադրերի հոսունության նվազեցում
- ներքին կորպորատիվ մշակույթի/մթնոլորտի ձևավորման նպատակով միջոցառումների կազմակերպում
- աշխատակիցների քանակի և աշխատավարձի ֆոնդի ավելացում

2012-2014թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի աշխատակիցների թվաքանակը պլանավորվում է, որ կավելանա 18%-ով կամ 1,866 աշխատողով (միջին տարեկան 6% աճ)՝ 2014թ. վերջին կազմելով 12,157 աշխատակից: Առաջիկա երեք տարիների ընթացքում վարչական աշխատողների թվաքանակը կավելանա 19%-ով (միջին տարեկան՝ 6%) կամ 1,556 աշխատակցով՝ 2014թ. վերջին կազմելով 9,667 աշխատակից *(տե՛ս Հավելված 3)*:

Կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում անձնակազմի կառուցվածքի արդյունավետությունը բնութագրող՝ "բանկային համակարգի վարչական աշխատողների թիվ/սպասարկող աշխատակիցների թիվ" հարաբերակցության ցուցանիշը կաճի 0.2–ով՝ 2014թ. վերջին կազմելով 3.9:

Կադրերի վերապատրաստման կարևորության գիտակցման ներքո կանխատեսվող ժամանակահատվածի ընթացքում բանկերի կադրերի ուսուցման և վերապատրաստման քաղաքականությունը բնութագրող մեկ վարչական աշխատողի վրա կատարված ուսուցման ծախսերի ցուցանիշը կաճի 53 հազ դրամով կամ 36%-ով և 2014թ. կկազմի 202 հազ դրամ *(տե՛ս Հավելված 5)*:

Բանկային համակարգի մեկ վարչական աշխատողին ընկնող միջին աշխատավարձն ու այլ վճարումները 2012-2014թթ. ընթացքում նախատեսվում է, որ կավելանան մոտ 20%-ով՝ 2014թ. վերջին կազմելով 5,3 մլն դրամ *(տե՛ս Հավելված 5)*:

VI ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոր հաճախորդների ներգրավման և հեղինակության բարձրացման գործընթացում կարևորելով մարքեթինգային միջոցառումների դերը՝ ՀՀ առևտրային բանկերը 2012-2014թթ. համար նախատեսել են իրականացնել հետևյալ **միջոցառումները**.

- գովազդային արշավներ (ԶԼՄ-ներով, ինտերնետային, տպագրված նյութերի տարածմամբ, արտաքին գովազդային վահանակներով)
- հասարակայնության հետ կապերի կիրառում (PR), գործընկերների հետ փոխհարաբերությունների թափանցիկության ապահովում
- հաճախորդների հետ հետադարձ կապի ապահովումը
- շուկայական հետազոտությունների, հարցումների իրականացում
- ճկուն սակագնային քաղաքականության կիրառում, զեղչային համակարգերի, ակցիաների իրականացում
- նոր բանկային ապրանքների և ծառայությունների մշակում/գործող տեսականու կատարելագործում
- մատուցվող ծառայությունների սպասարկման որակի և մրցունակության բարձրացում
- բանկային նոր տեխնոլոգիաների ներդրում
- բանկի ճանաչելիությանն/վարկանիշի բարձրացմանն և առանձին ծառայությունների առաջխաղացմանն ուղղված միջոցառումների իրականացում
- գլխամասային գրասենյակի և մասնաճյուղերի շենքերի արտաքին տեսքի բարելավում
- հատուկ թիրախային խմբի հաճախորդների սպասարկման համար առանձնացված մասնաճյուղի գործարկում
- ինտերնետային կայքի կատարելագործում/նորի գործարկում
- հովանավորչության / բարեգործություն իրականացում / սոցիալական պատասխանատվության գիտակցում

Նախատեսվող գովազդային միջոցառումները հիմնականում ունենալու են հետևյալ **ուղղությունները**.

- տեղեկատվական գովազդ
- բանկի հեղինակության, իմիջի գովազդ
- հաճախորդների բազայի ձևավորում/ընդլայնում
- առանձին ծառայությունների առաջխաղացում
- ավանդների/ռեսուրսների ներգրավման քաղաքականություն

Բանկերի կողմից իրականացվելիք շուկայական **հետազոտությունները** ուղղված են լինելու.

- բանկային ծառայությունների շուկայի ուսումնասիրություններ
- պոտենցիալ հաճախորդների/սպառման նոր շուկաների բացահայտում
- մրցակիցների վարքագծի, սակագների, քաղաքականության բացահայտում
- բանկային ծառայությունների շուկայում բանկերի մասնաբաժինների բացահայտում
- մրցակցային առավելությունների և մրցակիցների համեմատ թերությունների բացահայտում
- սպառողների պահանջների, կարիքների, նախասիրությունների, դժգոհությունների և առաջարկությունների բացահայտում/ուսումնասիրություն

Չնայած բանկերի կողմից մարքեթինգային միջոցառումներին հատկացվող մեծ նշանակությանը՝ այնուամենայնիվ, բանկային համակարգի գովազդային ծախսերի տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում փոքր ինչ կնվազի. բանկային համակարգի «գովազդի ծախսեր/ընդհանուր ծախսեր» ցուցանիշը 2014թ.՝ 2011թ.-ի նկատմամբ կանխատեսվում է, որ կնվազի 0.1 տոկոսային կետով՝ կազմելով 2.4% *(տե՛ս Հավելված 5)*:

VII ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ "ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ"

Ըստ կանխատեսումների՝ ՀՀ առևտրային բանկերը 2012թ. կիիմնեն 47 մասնաճյուղ, իսկ մինչև 2014թ.-ի վերջ՝ 2011թ.-ի վերջի համեմատ նախատեսվում է մասնաճյուղերի քանակի աճ 133-ով:

VIII ՆՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2012-2014թթ. համար ՀՀ առևտրային բանկերը նախատեսում են կիրառել հետևյալ նոր ծառայություններն ու տեխնոլոգիաները.

- ✓ *միջոցների ներգրավման գործառնություններ*
  - նոր ավանդատեսակների ներդրում
  - ոսկու ստանդարտացված ձուլակտորներով գործառնությունների իրականացում
  - առարկայազուրկ մետաղական հաշիվների բացման և սպասարկման ծառայությունների ներդնում
  - անհատական պահատեղերի տրամադրում

- ✓ *միջոցների տեղաբաշխման գործառնություններ*
  - վարկերի նոր տարատեսակների ներդրում
  - ֆինանսական վարձակալության (լիզինգ) իրականացում
  - օվերդրաֆտի տրամադրում

- ✓ *վճարահաշվարկային գործառնություններ*
  - հեռակա բանկային ծառայությունների մատուցում (E-Banking, E-Card Banking, Mobile-Banking, SMS-Banking, Bank-Client)
  - անդամակցում դրամական փոխանցումների համակարգերի
  - անդամակցություն միջազգային վճարային համակարգի
  - վճարային քարտերով իրականացվող նոր գործառնությունների ներդրում
  - նոր տեսակի վճարային քարտերի թողարկում/սպասարկում
  - չիպային քարտերի թողարկում/սպասարկում
  - սեփական պրոցեսինգային կենտրոնի ստեղծում
  - On-line ռեժիմով և ավտոմատ գանձման մեքենաներով բաժանորդավճարների ընդունում
  - չեկերի, ակրեդիտիվների և միջազգային վճարամիջոցների այլ ձևերի սպասարկում
  - Արտարժույթի Ավտոմատ Փոխանակման Սարքերի (ԱԱՓՍ) տեղադրում
  - Կանխիկի մուտքագրման Cash-in ավտոմատ մեքենաների տեղադրում
  - Քարտերի և PIN ծրարների առաքում փոստով

- ✓ *<u>տեխնիկական և ծրագրային ապահովվածություն</u>*
    - նոր համակարգչային ծրագրերի ներդրում/գործողների կատարելագործում
    - տեղեկատվական համակարգի միջազգային սերտիֆիկացում/ համապատասխանեցում միջազգային ստանդարտներին
    - տեղեկատվական տեխնոլոգիական ծառայությունների կառավարման (ITSL) համակարգի ներդրում
    - սերվերային համակարգի զարգացում
    - տվյալների արխիվացման համակարգի կատարելագործում
    - էլեկտրոնային թղթաշրջանառության համակարգի ներդնում
    - հեռահաղորդակցման համակարգի զարգացում
    - նոր կորպորատիվ ցանցի ստեղծում/առկա ցանցի կատարելագործում
    - հաշվետվությունների ձևավորման համակարգի ներդրում
    - Call Centre-ի ստեղծում
    - IP-Phone տեխնոլոգիայի ներդրում
    - հաճախորդների բողոքների ընդունման/արձանագրման համակարգի ներդրում
    - CRM (Customer Relationship Management) համակարգի ներդրում/ընդլայնում

IX ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

(տե՛ս հավելված 7)

ՀՀ բանկային համակարգի կոնցենտրացման փաստացի և բանկերի կանխատեսումների հիման վրա հաշվարկված ցուցանիշները՝ ըստ ակտիվների, վարկային ներդրումների, պետական արժեթղթերի, ֆիզիկական և իրավաբանական անձանց ավանդների ներկայացված են Հավելված 7-ում:

Բանկերի 2012-2014թթ. կանխատեսումների համաձայն՝ ՀՀ բանկային համակարգում կոնցենտրացիան գրեթե բոլոր ցուցանիշների գծով կնվազի:

Այսպես, ընդհանուր ակտիվների գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը չի փոխվի՝ 2014թ. վերջին կազմելով 0.07: 2012-2014թթ. ընդհանուր ակտիվների կոնցենտրացիայի ցուցանիշը՝ ըստ առաջին չորս բանկերի կաճի 3 տոկոսային կետով, իսկ ըստ յոթ և տասը խոշոր բանկերի՝ կնվազեն մեկական տոկոսային կետով և կկազմեն համապատասխանաբար՝ 40%, 59% և 74%:

Վարկային ներդրումների կոնցենտրացման Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կանխատեսվող ժամանակահատվածում կաճի 1 տոկոսային կետով՝ 2014թ. վերջին կազմելով 0.08: Վարկային պորտֆելի մեծությամբ առաջին չորս բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշը կաճի 4 տոկոսային կետով՝ կազմելով 45%, իսկ յոթ և տասը բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշները կնվազեն մեկական տոկոսային կետով և կկազմեն համապատասխանաբար 63% և 77%:

Պետական արժեթղթերի պորտֆելի գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կնվազի 0.05 կետով՝ 2014թ. վերջին կազմելով 0.07: Պետական արժեթղթերի մեծությամբ առաջին չորս, յոթ և տասը բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշները կնվազեն համապատասխանաբար 16, 9 և 6 տոկոսային կետերով՝ կազմելով 43%, 63% և 76%:

Ֆիզիկական անձանց ավանդների գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը 2014թ. վերջին՝ 2011թ.-ի վերջի համեմատ կնվազի 0.01-ով և կկազմի 0.07: Իրավաբանական անձանց ավանդների գծով առաջին չորս բանկերի կոնցենտրացիայի ցուցանիշը կաճի 1 տոկոսային կետով, իսկ ըստ յոթ և տասը բանկերի՝ կնվազեն 3-ական տոկոսային կետով և կկազմեն համապատասխանաբար 44%, 64% և 76%:

Իրավաբանական անձանց ավանդների գծով Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը 2014թ. վերջին՝ 2011թ.-ի վերջի համեմատ կնվազի 0.01-ով և կկազմի 0.08: 2012-2014թթ. ընթացքում ֆիզիկական անձանց ավանդների գծով կոնցենտրացիայի ցուցանիշները՝ ըստ առաջին չորս, յոթ և տասը բանկերի կնվազեն համապատասխանաբար 5, 8, 5 տոկոսային կետով և կկազմեն 46%, 65% և 78%:

Ընդհանուր կապիտալի համար հաշվարկված Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կանխատեսվող ժամանակաշրջանում չի փոխվի՝ կազմելով 0.06: 2012-2014թթ. ընդհանուր կապիտալի կոնցենտրացիայի ցուցանիշը՝ ըստ առաջին չորս խոշոր բանկերի չի փոխվի՝ կազմելով 38%, իսկ ըստ յոթ և տասը խոշորագույն բանկերի՝ կաճի համապատասխանաբար 1 և 2 տոկոսային կետով՝ կազմելով 58% և 72%:

X ԱՄՓՈՓՈՒՄ

2012-2014թթ. բանկային համակարգում նախատեսվում են հետևյալ զարգացումները.

- ակտիվների միջին տարեկան աճը կկազմի 18%.
  - վարկերի միջին տարեկան աճը կկազմի 25%.
  - վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կավելանա՝ 2014թ. կազմելով 69% (2011թ.՝ 58%).
- ՀՀ բանկային միջնորդությունը կաճի. 2014թ. ակտիվներ/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 68%՝ 2011թ.-ի 54%-ի համեմատ, իսկ վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կկազմի 47%՝ 2011թ.-ի 32%-ի համեմատ.
- նախատեսվում է ավանդների միջին տարեկան 20% աճ.
  - ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում կավելանա՝ 2014թ. կազմելով 58% (2011թ.՝ 54%).
    - ֆիզիկական անձանց ավանդների տեսակարար կշիռը ավանդների կառուցվածքում փոքր-ինչ կավելանա՝ 2014թ. կազմելով 62% (2011թ.՝ 59%)
    - ժամկետային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդների մեջ 2011 թվականի վերջի 60%-ից 2014 թվականին կհասնի մինչև 63%:
- ընդհանուր կապիտալը կաճի միջին տարեկան 18%-ով՝ հիմնականում շահույթի հաշվին.
  - կանոնադրական կապիտալի տեսակարար կշիռը ընդհանուր կապիտալում 2011թ.-ի 66%-ից կնվազի՝ 2014թ. հասնելով 50%-ի
- բանկային համակարգի լևերիջի (ակտիվներ/կապիտալ) ցուցանիշը 2014թ. վերջին 2011թ.-ի վերջի համեմատ չի փոխվի՝ կազմելով 6:
- բանկային համակարգի շահութաբերության մակարդակը կանխատեսվող ժամանակահատվածում կաճի. բանկերի ակտիվների շահութաբերությունը բնութագրող “զուտ շահույթ/միջին ակտիվներ” ցուցանիշը (ROA) 2012-2014թթ. կտատանվի 2.2%-2.8% (2011թ. 1.7%), իսկ կապիտալի շահութաբերությունը բնութագրող “զուտ շահույթ/միջին կապիտալ” (ROE) ցուցանիշը՝ 12.7%-16.6% միջակայքում (2012թ.՝ 9.5%):
- բանկային համակարգի զուտ տոկոսային մարժան կաճի՝ 2013թ. կազմելով 5.8% (2010թ.՝ 5.3%).
- ՀՀ առևտրային բանկերը 2012թ. կհիմնեն 47 մասնաճյուղ, իսկ մինչև 2014թ.-ի վերջ՝ 2011թ.-ի վերջի համեմատ նախատեսվում է մասնաճյուղերի քանակի աճ 133-ով
- 2012-2014թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի հաճախորդների քանակը կավելանա միջին տարեկան 15%-ով
- բանկերի 2012-2014թթ. կանխատեսումների համաձայն՝ կոնցենտրացիան բանկային համակարգում գրեթե բոլոր ցուցանիշների գծով կնվազի: